Հայաստանի Հանրապետություն

Վայոց ձոր մարզ

Թառաքումբ գյուղական համայնք

2011-20014 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է համայնքի ավագանու կողմից

03.03.2011թ. թիվ 9/03 որոշմամբ

Կազմեց՝

Համայնքի ղեկավար Գ.Մաթևոսյան

1.Համայնքի իրավիճակի գնահատում

Աշխարհագրական դիրքը,պատմական ակնարկ

Գյուղը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց ձոր գավառում,հիմնադրվել է 1828 թվականին:Սահմանակից է Հորս,Քարագլուխ,Աղնջաձոր,Սալի գյուղերին,ծովի մակարդակից միջին բարձրությունը 1640 մ է,կլիման չոր է ,տեղումների քանակը 300-350մմ է:

Ժողովրդագրություն

Գյուղում ապրում են 549 բնակիչներ,տղամարդիկ կազմում են բնակչության 51.2 տոկոսը,բնակչության կազմը հետևյալն է .

1.Երեխաներ - (0-6) - 27

2.Դպրոցականներ - (6-17) – 88

3.18-62 տարեկաններ -349

4.Հաշմանդամներ -17

5.Թոշակառուներ – 99

6.Աշխատունակներ – 326

7.Նպաստառուներ – 20

Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքը ղեկավարվում է համայնքի ղեկավարի կողմից ,որն ընտրվում է չորս տարվա պարբերությամբ : Համայնքի ղեկավարի աշխատակազմի մեջ մտնում են .

1.Աշխատակազմի քարտուղար – 1 հաստիք

2. Ֆինանսիստ- հաշվապահ – 1 հաստիք

3.Համայնքի կենտրոնի պահակ – 1 հաստիք

Համայնքի ենթակառույցներն են

Մշակույթի տուն

1.Տնօրեն – 1 հաստիք

2.Հավաքարար – 1 հաստիք

3.Համայնքի կենտրոնի պահակ – 1 հաստիք

Գրադարան

Գրադարանավար – 1 հաստիք

Համայնքի սեականություն հանդիսացող գույքը

Վարչական շենք – վթարային,անցած դարի 60-ական թթ կառույց .

Համայնքի կենտրոն - գերազանց վիճակ , 2009 թ. կառույց,որտեղ տեղակայված են համայնքապետարանը,գրադարանը, խաղասենյակները, կուլտուրայի տունը և «Սյունիք» ՀԿ-ի Թառաթումբի համայնքային կենտրոնը:

Խմելու ջրի արտքին ցանց – 10 կմ ,2008-09 թթ կառույց, վիճակը՝նորմալ.

Խմելու ջրի ներքին ցանց – 3 կմ ,վիճակը՝բավարար.

Փողոցները մասնակիորեն վերանորոգվում են համայնքապետարանի կողմից , սակայն միջոցների սուղ լինելու պատճառով փողոցները մնում են անբարեկարգ և դժվար երթևեկելի :

Շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում աղբահանությունը կատարվում է անհատական ձևով:Նախատեսվում է այն կատարել համայնքապետարանի միջոցներով:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 118 առանձնատուն 16854 քառ.մ ընդհանուր մակերեսով;Բնակարանով չապահովված ընտանիքների թիվը 20-ից ավելի է :

Հողատարածքի օգտագործում

Համայնքի վարչական տարածքը – 2072.9 հա

Վարելահող	- -61 հա
Խոտհարք	--146 հա
Տնամերձ հողեր	-- 75 հա
Հասարակական օգտագործման	--1.09 հա
Պատմական և մշակութային	--3.7 հա
Արդյունաբերական	--0.67 հա
Տրանսպորտի	--1.76 հա
Գետեր	--6.27 հա
Սեփականաշնորհված հողեր	--125 հա

Սեփականաշնորհված մեկ հողբաժնի չափը –0.47 հա

Գյուղատնտեսություն

Համայնքը հիմնականում զբաղվում է պտղաբուծությամբ ,բաբջար-բոստանային կուլտուրաների մշակությամբ (հիմնականումէկարտոֆիլ),մեղվաբուծությամբ և անասնապահությամբ:

Մշակույթ,սպորտ,հոգևոր դաստիարակություն

Համաինքն ունի նորակառույց մշակույթի տուն,գրադարան,խաղասենյակներ:Երիտասարդությունը օգտվում է դպրոցի մարզադահլիճից:

Առողջապահություն

Համայնքն ունի մեկ բուժկետ,սպասարկում է մեկ բուժքույր:

2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Ռազմավարությունը

Բարեփոխումներանցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները,գյուղը դարձնել գեղեցիկ,բարեկարգ բնակավայր :

Հիմնական նպատակները

1.Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը.

2.Համայնքն ապահովել շուրջօրյա ոմելու ջրով.

3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ծրագիր նո 1

Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա ունենալ ջրի անհրաժեշտ պաշար և ապահովել ջրի շուրջօրյա մատակարարում.

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- կազմել ծրագրի նախագծա- նախահաշվային փաստաթղթերը .
- 2012 թվականին իրականացնել շինարարական աշխատանքները

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 15 մլն դրամ

Ծրագիր թիվ 2

Հանդիսությունների սրահի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Նախատեսվում է կառուցել հանդիսությունների սրահ,որը կկահավորվի և կապահովվի անհրաժեշտ սպասքով համայնքում հարսանիքներ,տոնախմբություններ և այլ մասայական միջոցառումներ անցկացնելու համար:

Ծրագրի հիմնական նպատակը

Կառուցել միջոցառումների սրահ,որտեղ կկազմակերպվեն հարսանիքներ,տոնախմբություններ և այլ մասայական միջոցառումներ:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

-գտնել հովոնավոր ծրագիրը ֆինանսավորելու համար.

- կազմել ծրագրի նախագծա- նախահաշվային փաստաթղթերը.

-ծրագիրն իրքականացնել 2013թվականին:

Ծրագիր թիվ 3

Համայնքում աղբահանության աշխատանքների կազմակերում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքում սանիտարական վիճակը բարելավելու,համաճարակները կանխելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել աղբահանության աշխատանքներ:

Աղբահանությանն իրականացնել ըստ գրաֆիկի

Ծրագրի հիմնական նպատակը

-համայնքում ապահովել բավարար սանիտարա-հիգենիկ պայմաններ.

-ծրագրի իրականացման համար կազմել նախահաշվային փաստաթղթեր և աղբահանության գրաֆիկ.

-արխատանքներն իրականացնել 2010-2014թթ.

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է տարեկան 300.000 դրամ,որը կտրամադրվի համայնքապետարանի միջոցներից

Ծրագիր թիվ 4

Համաքային փողոցների ասֆալտապատում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ներհամայնքային ճանապարհները խիստ անբարեկարգ են,համայնքի միջոցներով ամեն տարի մասնակիորեն վերանորոգվում են ,սակայն դա բավարար չէ նորմալ երթևեկության համար

Ծրագրի հիմնական նպատակը

Ծրագրի հիմնական նպատակը ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումն է ,որը կապահովի նորմալ երթևեկություն և մարդկանց անցուդարձ:

-Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ

- Հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- կազմել ծրագրի նախագծա- նախահաշվային փաստաթղթերը .
- 2014 թվականին իրականացնել շինարարական աշխատանքները
- ապահովել համայնքի ներդրումը

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 50 մլն դրամ:

Ծրագիր թիվ 5

Գյուղամիջյան գլխավոր ճանապարհի գետամերձ հատվածի հենապատի կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

2-րդ փողոցի 100-150 մ հատվածում գետի գարնանային վարարումների ժամանակ ճանապարհը խիստ վնասվել է և ստեղծել խիստ վտանգավոր պայմաններ երթևեկության համար: Անհրաժեշտ է կառուցել հենապատ գարնանային վարարումներից ճանապարհը փլուզումից պաշտպանելու համար:

Ծրագրի հիմնական նպատակը

Համայնքի տարածքում անվտանգ երթևեկության ապահովումը:

ԾրագրՀի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ

- Հիմնախնդիրը բարձրացնել կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու համար.
- կազմել ծրագրի նախագծա- նախահաշվային փաստաթղթերը .
- 2014 թվականին իրականացնել շինարարական աշխատանքները
- ապահովել համայնքի ներդրումը

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 7 մլն դրամ:

4.Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատսում

Համայնքումծրագրերի իրականացան համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Այն ունի հետևյալ տեսքը

h/h	եկամուտների կեսակը	2010 փաստացի հազ. դրամ	2011 նախատեսված հազ.դրամ	2012 կանխատեսված հազ. դրամ	2013 կանխատեսված հազ.դրամ	2014 կանխատեսված հազ.դրամ
	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	8.551..6	8.313.7	8012.2	8.736.2	9.986.2.0
Ա	Հարկային եկամուտներ	820.0	760.0	770.0	785.0	805.0
1	Հողի հարկ	435.0	375.0	335.0	335.0	335.0
2	Գույքահարկ	385.0	385.0	435.0	450.0	470.0
Բ	Տուրքեր	45.0	40.0	40.0	40.0	40.0
1	Տեղական տուրքեր	45.0	40.0	40.0	40.0	40.0
Գ	Ոչ հարկային եկամուտներ	137.2	143.9	141.2	141.2	141.2
1	Պահուստային հողերից վարձավճարներ	137.2	143.9	141.2	141.2	141.2
Դ	Պաշտոնական տրանսֆերտներ	7.549.4	7.369.8	7.061	7.770.0	9.000.0
	Ազատ մնացորդ	1.329.0	1.086.3	467.0	358.0	400.0

5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

h/h	Ցուցանիշները	Չափի միավորը	2010թ. փաստա-ցի	2011թ. նախա-տեսված	2012թ. կանխա-տեսված	2013թ. կանխա-տեսված	2014թ. կանխա-տեսված
1	Համայնքի վարչական տարածքը	հա	1144.9	2072.9	2072.9	2072.9	2072.9
2	Բնակչության թիվը	մարդ	599	573	566	560	560
3	Ծնունդ	մարդ	5	5	6	7	6
4	Աշխատանքային ռեսուրսներ	մարդ	335	326	342	340	340
5	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	3	3	4
6	Պահուստային հողեր	հա	3.0	3.0	3.0	3.0	3.0
7	Խմելու ջրի ցանցի երկարությունը	կմ	13.0	13.0	13.0	13.0	13.0
8	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	5.5	5.5	5.5	5.5	5.5
9	Ոռոգման ցանցի տակ ընկած հողեր	հա	75.0	75.0	75.0	75.0	75.0
10	Ներհամայնքային փողոցների երկարությունը	կմ	9.5	9.5	9.5	9.5	3.0
11	Չբարեկարգված փողոցների երկարությունը	կմ	9.5	9.5	9.5	9.5	3.0
12	Բնակարանային ֆոնդը	քառ.մ	16854	17000	17000	17200	11400
13	Բնակարանակարիքավոր ընտանիքների թիվը	հատ	20	20	20	19	15
14	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	200	200	200	200	200
15	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	աշա-կերտ	82	76	72	67	60
16	Գյուղապետարանի և ենթակառուց վածքների աշխատողների թիվը	մարդ	7	7	7	7	7